

Իսլամական արմատականությունը Ուզբեկստանում (20-րդ դարի վերջ-21-րդ դարի սկիզբ)

Գրիգորյան Ս. Մ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ընդհանուր պատմության բաժին
պ.գ.թ., րոնգենոս (Երևան, Հայաստան)
grigorian_sargis@yahoo.com

Վճռորոշ բառեր: Իսլամ, Ուզբեկստան, իսլամական արմատականություն, Կենտրոնական Ասիա, ծայրահեղականություն, ահաբեկչություն

Исламский радикализм в Узбекистане (Конец 20 века - начало 21 века)

Григорян С. М.

Институт Истории НАН РА, отдел всеобщей истории
кандидат исторических наук, доцент (Ереван, Армения)
grigorian_sargis@yahoo.com

Аннотация. В последние годы в Центральной Азии наблюдается рост суннитских исламских радикальных, особенно экстремистских, настроений. В данной статье исследуется исламский радикализм и экстремизм в Центральной Азии, особенно в Узбекистане в конце 20-ого и начале 21-ого веков. Узбекистан является одной из ключевых стран в Центральной Азии, где существование исламского радикализма и экстремизма и их тенденции к распространению оказывают влияние не только на регион, но и за его пределы. Поэтому, изучение вышеупомянутых радикальных исламских проявлений, современных экстремистских движений, структур и лидеров, руководствующихся этими идеями, и их активности в Узбекистане, позволит прогнозировать эти опасные тенденции и сдерживать их распространение.

Ключевые слова: Ислам, Узбекистан, Исламский радикализм, Центральная Азия, экстремизм, терроризм.

Islamic radicalism in Uzbekistan (End of the 20th century - Beginning of the 21st century)

Grigoryan S. M.

Institute of History of NAS RA, Department of Global History
PhD, Associate Professor (Yerevan, Armenia)
grigorian_sargis@yahoo.com

Abstract. In recent years, there has been an increase in Sunni Islamic radical, particularly extremist, sentiments in Central Asia. In this article were examined the expressions of Islamic radicalism and extremism in Central Asia, particularly in Uzbekistan in the late 20th and early 21st centuries. Uzbekistan is one of the key countries in Central Asia, where the presence of Islamic radicalism, extremism and their tendencies to spread influence not only in the region but also beyond. Therefore, the study of the above-mentioned modern manifestations of Islamic radicalism, extremism, structures and leaders guided by these ideas, their activity in Uzbekistan will make it possible to predict these dangerous tendencies and restrain their spread.

Key words: Islam, Uzbekistan, Islamic Radicalism, Central Asia, extremism, terrorism

Իսլամի տարածումը Կենտրոնական Ասիայում տեղի է ունեցել դեռ 8-րդ դարից, երբ արաբական նվաճումներից հետո տարածաշրջանը դարձավ իսլամի և իսլամական մշակույթի կարևոր կենտրոններից մեկը: Միջնադարում իսլամի ավանդական ուղղություններից գատ Կոնտրոնական Ասիայում լայն տարածում գտավ նաև սուֆիականությունը որպես իսլամի միստիկական ուղղություն [9]: Տարածաշրջանը չկորցրեց իր կարևորությունն իսլամի և մուսուլմանների համար նաև ուշ միջնադարում և նոր ժամանակներում, մասնավորապես 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում: Այնուամենայնիվ խորհրդային կարգերի հաս-

տատումից հետո կոմունիստական գաղափարախոսության ճնշումների տակ Կենտրոնական Ասիայում իսլամական գաղափարական ակտիվությունը անկում ապրեց: Այդ ժամանակաշրջանում փակվեցին մզկիթներ և իսլամական կենտրոններ, արգելվեցին իսլամական ծիսակատարություններն ու հավաքական կրոնական արարողությունները: Այդ համընդհանուր արգելքների հետևանքով նվազեցին մզկիթների քանակը: Եթե մինչև 1917 թ. Կենտրոնական Ասիայում կար մոտ 20000 մզկիթ, ապա 1929 թ. դրությամբ դրանց թիվը դարձավ մոտ 4000: 1935 թ. տվյալներով հենց Ուզբեկստանում պաշտոնապես գրանցված մզկիթների թիվը 60-ն էր [10]:

Իրավիճակը որոշ չափով փոխվեց խորհրդային իշխանության վերջին տարիներին, երբ քաղաքական և գաղափարական ազատությունները նպաստեցին իսլամի տարածմանը տարածաշրջանում [8]: Այդ ժամանակ իսլամի ավանդական կրոնաիրավական ուղղություններից զատ նկատվեց նաև արմատական իսլամի գաղափարական ակտիվություն, որի աստիճանական ամրացումը Կենտրոնական Ասիայում տեղի ունեցավ նաև արդեն տարածված «Մուսուլման եղբայրներ» իսլամական արմատական կառույցի շնորհիվ:

Աֆղանական պատերազմը (1979-1989 թթ.) նույնպես նպաստեց իսլամի արմատական ուղղության ակտիվացմանը Կենտրոնական Ասիայում, մասնավորապես Ուզբեկստանում: Այդ պատերազմը պատճառ դարձավ, որ մեծ թվով ուզբեկներ տեղափոխվեցին Պակիստան՝ տեղի կրոնաիրավական դպրոցներում արմատական գաղափարախոսությունը խորացված ուսումնասիրելու, ռազմական պատրաստություն անցնելու և Աֆղանստանում կռվելու նպատակով: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Աֆղանստանում հայտնված իսլամականների զգալի մասը պատրաստի մարտիկներ չէր, և իսլամական ծայրահեղական կառույցների կողմից ստեղծված ռազմական ճամբարներում էր վերածվում պոտենցիալ զինյալների [11, էջ 220]: Աֆղանական պատերազմի ընթացքում ի հայտ եկան ռազմական փորձ ձեռք բերած իսլամականներ, որոնք համախմբված էին համընդհանուր գաղափարներով: Պատերազմից հետո նրանք հիմնականում մնացին անգործ և պատրաստ էին շարունակել պայքարը մուսուլմաններին աջակցելու համար աշխարհի տարբեր հատվածներում, այդ թվում Կենտրոնասիական տարածաշրջանում: Աֆղանական փորձից վերցրած շատ գործոններ (մոբիլիզացիոն մեխանիզմներ, կամավորների և միջոցների հավաքագրում և այլն) իսլամականների կողմից հետագայում օգտագործվեցին այլ տարածաշրջաններում, այդ թվում Կենտրոնական Ասիայում ընթացող նաև ռազմական գործողություններում: Աֆղանական պատերազմի ավարտը (որը իսլամական ծայրահեղ արմատականները համարեցին հաղթանակ ԻՍՀՄ դեմ) և ստեղծված իրավիճակը դրդեցին Կենտրոնասիական տարածաշրջանը ներկայացնող իսլամականներին, այդ թվում ուզբեկներին, փորձ անել տարածել արմատականությունը և հասնել իսլամական հեղափոխությանը նաև իրենց երկրում:

1990-ական թթ. սկսած Կենտրոնական Ասիայում իսլամական արմատականության ակտիվության պատճառները ոչ միայն Աֆղանստանում ընթացող գործընթացներն էին, որի հետևանքով մեծ թվով պատերազմի մեջ

ներքաշված տարածաշրջանը ներկայացնող մուսուլմաններ ետ վերադարձան իրենց հայրենիք և փորձ արեցին ակտիվացնել արմատականությունը, այլև՝ Կենտրոնական Ասիայում առկա անկայունությունը, տնտեսական ճգնաժամը, սոցիալ-քաղաքական խնդիրները, որոնք նպաստեցին իսլամական արմատականության, մասնավորապես ծայրահեղականության տարածմանը: Տարածաշրջանում աստիճանաբար գլուխ բարձրացնող իսլամական արմատական կառույցների շրջանում ավելացավ ակտիվ գործելու տրամադրությունները հատկապես 1990-ական թթ. տալիբների կողմից Աֆղանստանը նվաճելուց հետո [1, էջ 41-44]: Աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությանը և դրանով պայմանավորված Կենտրոնական Ասիայում ընթացող գործընթացներին զուգահեռ տարածաշրջանում սկսեցին հասարակական զանգվածային դժգոհությունները կենտրոնական իշխանությունների դեմ: Այդ համատեքստում իսլամի արմատական ուղղությունների տարածումը տարածաշրջանում պայմանավորված էր նաև ներքոհիշյալ ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ:

- Ներքին գործոններից էին՝ սոցիալական և տնտեսական խնդիրները, ինչպես օրինակ՝ գործազրկությունը, աղքատությունն ու կոռուպցիան:

- Արտաքին գործոններից էին՝ աշխարհաքաղաքական նոր իրողություններն ու նոր հակամարտությունների առաջացումը:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո պարարտ հող ստեղծվեց իսլամի տարածման համար ուզբեկստանյան իրողություններում, որտեղ կյանքի և կենցաղի դավանական արժևորման խնդիր դրվեց: Ուզբեկստանի անկախացմամբ իսլամի նկատմամբ հետաքրքրությունն ավելացավ, որն արտահայտվեց տարաբնույթ կրոնական կառույցների ու մզկիթների թվաքանակի ավելացմամբ: Այդ տարիներին որոշ մզկիթներ նույնիսկ վերածվեցին արմատական գաղափարներ քարոզելու կենտրոնների [2, էջ 43]: Ձևավորվող պետական գաղափարական ուղղվածության մեջ իսլամին տրվեց կարևոր դերակատարում, որը նաև գործիք էր ղեկավար շրջանակի կողմից հասարակական-քաղաքական գործընթացները վերահսկելի դարձնելու առումով [4, էջ 2-3]: Կենտրոնական Ասիայում իսլամական արմատական տրամադրությունների ակտիվացման վրա ազդեցություն ունեցավ նաև Տաջիկստանի քաղաքացիական պատերազմը (1992-1997թթ.): Ստեղծված պայմաններում 1996թ. ռուսական զորքերը մուտք գործեցին Տաջիկստան, ինչը իսլամականների կողմից դիտարկվեց որպես մուսուլմանական երկրի հանդեպ ռոտնձգություն, իսկ Աֆղանստանից և Պակիստանից նոր

զինյալների խմբաքանակ ուղարկվեց տարածաշրջան: Մակայն, քանի որ Տաջիկստանի սահմանները այդ ժամանակ լավ էին վերահսկվում, իսլամականներին մեծ հաշով չհաջողվեց անցնել սահմանը, որից հետո նրանք ետ վերադարձան Աֆղանստան և Պակիստան, իսկ նրանցից ոմանք միացան «ալ-Կաիդա» իսլամական ծայրահեղական կառույցին [6, էջ 54-55]: Մաթերեսս վկայությունն էր այն բանի, որ իսլամական ծայրահեղական կառույցների միջև տարածաշրջանում ընթացող գործընթացների վերաբերյալ կային համակարգված մոտեցումներ և գաղափարական ընդհանրություններ: Այդ համատեքստում Կենտրոնասիական տարածաշրջանում նկատվեց իսլամական ծայրահեղական գաղափարախոսությամբ առաջնորդվող կառույցների ակտիվություն, որոնք գործում էին թե՛ կենտրոնասիական երկրներում, թե՛ դրանցից դուրս: 1990-ական թթ. տարածաշրջանում գործող իսլամական ծայրահեղական խմբերի մի հատվածը ակտիվ շփումների մեջ էր «ալ-Կաիդա»-ի և տալիբների հետ [5, էջ 250-255]: Մինչ աֆղանական պատերազմն անցած իսլամականները փորձում էին տեղափոխվել Տաջիկստան կառավարական ուժերի դեմ պայքարելու, քաղաքացիական պատերազմում ակտիվ ներգրավված «Իսլամական վերածննդի կուսակցության» ղեկավար շրջանակները արտաքին ասպարեզում ռազմական և ֆինանսական օժանդակություն ստանալու նպատակով այցելում էին Իրան, Պակիստան և Սաուդյան Արաբիա: Աստիճանաբար «Իսլամական վերածննդի կուսակցության» շարքերում ավելացող հակասությունների և կառույցի դիրքերի թուլացմանը զուգընթաց, կենտրոնասիական տարածաշրջանում ավելանում էր այլ իսլամական արմատական հոսանքների դերակատարությունը՝ ապակայունացնելով տիրող իրավիճակը տարածաշրջանում: Այդ էր պատճառը, որ արևմտյան ուժային կենտրոնները, մասնավորապես՝ ԱՄՆ-ն, ձգտելով մեկուսացնել «Տալիբան» շարժումն ու Ուսամա բեն Լադենին Աֆղանստանում և Պակիստանում, ցանկանում էր կայունացնել իրավիճակը նաև Կենտրոնական Ասիայում [10]: Տարածաշրջանում իսլամական արմատական գաղափարները լայն տարածում ունեցան հատկապես Ֆերգանայի հովտում, որը գտնվում է Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջնամասում: Այդ էր պատճառը, որ իսլամական արմատականության ակտիվություն նկատվեց Ղրղզստանի հարավում, Տաջիկստանում և Ուզբեկստանում: Ի տարբերություն վերոհիշյալ հատվածի, Ղրղզստանի հյուսիսում, Ղազախստանում և Թուրքմենստանում արմատականությունը այդքան չէր արտահայտված:

1990-ական թթ. կեսերից Կենտրոնական Ասիայի ամենամեծ մուսուլմանական բնակչություն ունեցող Ուզբեկստանում իսլամի ավանդական ուղղությունների, նաև ծայրահեղ արմատականության տարածումը գաղափարա-համար իշխանությունները սկսեցին խտրական վերաբերմունք դրսևորել՝ իսլամի ակտիվ տարածումը երկրում համարելով գաղափարական-քաղաքական խոչընդոտ: Պետք է փաստել, որ Իսլամ Կարիմովի վարչակարգը փորձեց գտնել նաև այնպիսի կրոնական առաջնորդներ, որոնք իրենց գաղափարներով կաջակցեին ուզբեկստանյան իշխանությունների պաշտոնական գիծը: Այս մոտեցումն իր պաշտպանություն էր գտել իսլամի Հանաֆիական կրոնաիրավական ուղղության մեջ, որը խարսխվում էր իսլամի հանդեպ բարիդրացիական վերաբերմունք ունեցող իշխանություններին աջակցություն ցուցաբերելու ավանդույթի վրա: Միևնույն ժամանակ իշխանություններն ու կրոնական առաջնորդները այն համոզման էին, որ իսլամին է վերապահված ազգային գաղափարախոսության ձևավորման համար առաջնային դերակատարումը: Ըստ այդմ, այդ տարիներին կառավարող շրջանակի համար կար երկու մոտցում՝

1. զարկ տալ ազգայնականությանը,
2. առաջ քաշել իսլամը որպես հոգևոր-գաղափարաբանական երևույթ սոցիալական միասնության հասնելու նպատակով:

Արդյունքում ուզբեկստանյան իշխանությունները որոշեցին սինթեզել վերոհիշյալ երկու մոտեցումները: Իշխանությունների մոտ առաջացավ գիտակցում, որ երկար տարիներ իսլամի նկատմամբ ճնշումները բացասական ազդեցություն չունեցան կրոնական ավանդույթների ամրացման վրա, որոնք բավական խոր արմատներ ունեին հասարակության մեջ: Այդ համատեքստում սկսվեց տեղի իսլամն օգտագործել իսլամական այլ տրամադրությունների, մասնավորապես արմատականության դեմ պայքարում [4, էջ 2-3]:

Կենտրոնասիական տարածաշրջանում ինչպես և մուսուլմանական աշխարհի այլ հատվածներում այսօր էլ գոյություն ունեն հակասություններ ավանդական իսլամական ուղղությունների և տարածվող իսլամական արմատականության և ծայրահեղականության միջև, որոնք դրսևորվեցին նաև Կենտրոնասիական տարածաշրջանում իսլամի արմատական ուղղության քաղաքական կյանքին միջամտելու և դրան բռնի պայքարի միջոցներով խառնվելու տեսքով 20-րդ դարի վերջում: Այդ իրողությունն արտահայտվեց 1999 թ. փետրվարին Ուզբեկստանի մայրաքաղաքում տեղի ունեցած պայթյունների տեսքով՝ կառուցվածքային և կազմակերպչական առավել ամուր տեսք հաղորդելով իշխանությունների դեմ պայքարին:

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները և Աֆղանստանում կռաւի-ցիոն ռազմութի պատժիչ գործողություններն իրենց ազդեցությունն ունեցան իսլամական արմատականության և դրա ծայրահեղական դրսևորումների վրա Կենտրոնական Ասիայում ևս: Տալիբական Աֆղանստանի դեմ 2001 թ. սկսված ռազմական գործողություններն էլ ավելի կարևորեցին կենտրոնասիական տարածա-շրջանը Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար: Այդ առումով Կենտրոնական Ասիայում, այդ թվում Ուզբեկստանում ազդեցության տարածման լայն հնարավորություններ ստեղծվեցին առաջին հերթին տեղի իսլամական ծայրահեղական կառույցների համար, ինչը չի կարելի ասել առավել հայտնի և ազդեցություն ունեցող ծայրահեղական կառույցների («ալ-Կաիդա» և այլն) մասին, որոնց հանդեպ հիշյալ ժամանակահատվածում կռաւիցիոն ուժերի շարունակական պատժիչ գործողությունները չեզոքացրել էին այդ կառույցների հնարավորությունները Կենտրոնական Ասիայում:

Կենտրոնասիական տարածաշրջանային իսլամական կառույցները սկսեցին պայքարը նոր հետևորդների հավաքագրման և բջիջներ ստեղծելու համար: Այդ պայքարի առարկայական դրսևորումներից էր Ուզբեկստանի տարբեր հատվածներում ահաբեկչական ակտիվությունը: Մասնավորապես 2004 թ. «Իսլամական ջիհադ միությունը» իրականացրեց ահաբեկչական հարձակումներ մայրաքաղաք Տաշքենդում [7, էջ 10-13]: Այդ ահաբեկչությունները 21-րդ դարի առաջին մեծ բռնարարքներն էին այդ երկրում: Այդ առումով 2000-ական թթ. կեսերից Անդի-ջանը դարձավ իսլամական արմատականության և ծայրահեղ արմատականության տարածման կենտրոններից մեկը:

Ուզբեկստանում իր ակտիվությամբ աչքի ընկավ «Հիզբ ալ-Թահրիր ալ-Իսլամիա» (ՀԹԻ) կազմակերպությունը, որի հիմքը դրվել էր դեռևս 1952 թ. Արևելյան Երուսաղեմում: ՀԹԻ ակտի-վությունը Կենտրոնական Ասիայում նկատվեց 1970-ական թթ. հիմնականում Ֆերգանայի հովտում, որից հետո կառույցը սկսեց տարածվել Ուզբեկստանի և Կենտրոնասիական տարածա-շրջանի մյուս հատվածներում: 1999 թ. Տաշքեն-դում տեղի ունեցած ահաբեկչությունից և դրա-նում ուզբեկստանյան իշխանությունների կող-մից ՀԹԻ մեղադրանքներից հետո կառույցը ևս համալրվեց իսլամականներով: Սակայն 2000 թ. սկզբից ուզբեկստանյան իշխանությունների բռնաճնշումների հետևանքով կառույցի շատ հետևորդներ լքեցին երկիրը՝ տարածվելով հարևան կենտրոնասիական հատկապես ուզբեկ բնակչություն ունեցող Տաջիկստանի, Արդստա-նի և Ղազախստանի առանձին շրջաններում:

Կենտրոնական Ասիայում ՀԹԻ հետևորդ-ների թվաքանակի մասին տեղեկությունները սուղ են, սակայն ինչ վերաբերում է հավաքա-գրումներին, ապա կարող ենք նշել, որ կառույցը համալրվում է ուզբեկներով, տաջիկներով և դրոզներով, ավելի քիչ թուրքմեններով և դա-գախներով [3]: Կառույցի ֆինանսավորումը կա-տարվում է տարբեր աղբյուրներից, այդ թվում արևմտյան երկրների տարբեր դրամական համալրումներից եկող ֆինանսական հոսքերից: ՀԹԻ գաղափարախոսական մտացումների հիմքում խալիֆայություն հիմնելու գաղափարն է, որը չի սահմանափակվում տարածաշրջանով:

Իր ակտիվությամբ Ուզբեկստանում առանձնացել է նաև «Ուզբեկստանի իսլամական շարժում» (ՈւԻՇ) կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1992 թ. Թահիր Յուլդաշևի կող-մից: Վերջինիս գաղափարների վրա մեծ ազդե-ցություն է ունեցել դեպի Մաուլույան Արաբիա, Պակիստան և Աֆղանստան նրա ճանապար-հորդությունը, որտեղ Յուլդաշևը տարվել է վահաբականության գաղափարախոսությամբ:

Յուլդաշևը իր գաղափարները տարածել է Ֆերգանայի հովտում գործող մզկիթների և մադրասաների ցանցային խողովակներով, որի արդյունքում կառույցը համալրվել է բազմաթիվ հետևորդներով: Ինչ վերաբերում է կառույցի ռազմական ակտիվությանը, ապա այն բանից հետո, երբ Ջումա Խոջիև Նամանդանին դար-ձավ կառույցի ռազմական պլանավորման գործողությունների հրամանատարը, ՈւԻՇ բռնարարքներով աչքի ընկավ թե՛ Ուզբեկ-ստանում, թե՛ Կենտրոնասիական տարածա-շրջանում 1990-ական թթ. կեսերին: Իր հարցա-գրույցներից մեկում Յուլդաշևը հայտարարեց, որ ՈւԻՇ գլխավոր նպատակն է Կենտրոնական Ասիայում ստեղծել իսլամական արժեհամա-կարգով առաջնորդվող պետություն: Հիշյալ իսլամական մոդելը չի կրկնելու Աֆղանստանի, Իրանի, Պակիստանի կամ Մաուլույան Արաբիայի մոդելները և այդ յուրահատուկ համակարգի ձևավորման համար կառույցը որդեգրել է բռնի ուժի կիրառման ճանապարհը: Վերոհիշյալ երկու կառույցների՝ ՀԹԻ և ՈւԻՇ միջև հիմնական տարբերությունը կայանում էր նրանում, որ ՈւԻՇ առավել ակտիվ ռազմական գործողու-թյունների կողմնակից էր, մինչդեռ ՀԹԻ ուշա-դրությունն առավել տեսական, գաղափարական ակտիվության մեջ էր [3]:

Իսլամական արմատական գաղափարախո-սությամբ առաջնորդվող կառույցներից Ուզբեկ-ստանում ակտիվություն է դրսևորել նաև «Աքրամիլար» կառույցը: Այն հիմնադրվել է 1996 թ. Անդիջանում, և իր անվանումը վերցրել է իր հիմնադրի՝ Աքրամ Յուլդաշևի անունից: Յուլ-դաշևը 1986-1988 թթ. անդամակցել է ՀԹԻ, սակայն որոշ անհամաձայնությունների պատ-

ճառով լքել էր այն [13]: Յուդաշևը մեղադրվեց 1999 թ. փետրվարին Ուզբեկստանի մայրաքաղաքում տեղի ունեցած ահաբեկչական հարձակման համար և դատապարտվեց 17 տարվա ազատազրկման: «Աքրամիլարի» գործունեության նպատակներից էր հնարավորինս ծանրակշիռ ազդեցություն ունենալ իշխանական շրջանակների վրա: Բացի այդ, կառույցը փորձում էր առավել պարզ և ընկալելի իսլամական գաղափարներ քարոզել՝ հասարակության շրջանում բարձրացնելով սեփական հեղինակությունը: Միևնույն ժամանակ կառույցի առավել հարուստ համակիրների ֆինանսավորմամբ տեղերում աշխատատեղեր, տարաբնույթ սոցիալական ծրագրեր և մարդասիրական հիմնադրամներ բացելով՝ «Աքրամիլարը» կարողացավ արդյունավետ կերպով դեպի իրեն գրավել երիտասարդների [1, էջ 41-44]:

2010 թ. վերջից սկսված՝ «Արաբական գարունը» և դրանով պայմանավորված հեղափոխական գործընթացները նպաստեցին իսլամական ծայրահեղականության ակտիվությանը մուսուլմանական աշխարհում: Այդ համատեքստում իսլամական ծայրահեղականության մեջ ի հայտ եկած նոր իրողությունները նպաստեցին կենտրոնասիական տարածաշրջանի իսլամական արմատականության ակտիվությանը ևս: 2011-2020 թթ. Սիրիայում և Իրաքում տեղ գտան նոր զարգացումներ, և այդ համատեքստում սիրիական հակամարտությունը ևս պատճառ դարձավ, որ Կենտրոնական Ասիայում, այդ թվում Ուզբեկստանում ակտիվանան ծայրահեղական տրամադրությունները: Կենտրոնասիական երկրներից իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող մուսուլմաններ տեղափոխվեցին Միջին Արևելք՝ մասնակցելու Սիրիայում և Իրաքում ընթացող ռազմական գործողություններին: Ուզբեկ իսլամականները ոչ միայն ակտիվ ներքաշվեցին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ջիհադական պայքարի մեջ, այլ նաև ստեղծեցին ուզբեկներով համարված խմբավորումներ («Իմամ Բուխարի», «Քաթիբա ալ-Թաուհիդ ուա ալ-Ջիհադ» և այլն), գլխավորեցին այլ իսլամական ազդեցիկ և հեղինակավոր խմբեր և այլն: Սիրիայում և Իրաքում կռված ուզբեկների թվաքանակի վերաբերյալ տարբեր գնահատականներ կան՝ 500-ից մինչև 3500. մարդու իրավունքներով զբաղվող որոշ թուրք ակտիվիստների գնահատականներով մոտ 3000-3500 ուզբեկ [12]:

21-րդ դարի երկրորդ տասնամյակում Ուզբեկստանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցներից էին «Ուզբեկստանի իսլամական շարժում», «Իսլամական ջիհադ միություն», «Ջամաա Անսար Ալլահ», «Ջունդ ալ-Իսալիֆա» և այլ իսլամական կազմակերպությունները: Հիշյալ ժամանակաշրջանում իսլամական

մական ծայրահեղ արմատական տիրույթում ակտիվ գործող կառույցներից «ալ-Կարդա»-ն և «Իսլամական պետությունը» ակտիվ ներկայացվածություն չունեցան տարածաշրջանում: Դրա պատճառներից էին հարևան Պակիստանում և Աֆղանստանում ընթացող գործընթացներին այդ կառույցների ակտիվ մասնակցությունը, հիշյալ երկրներում այդ կառույցների դեմ արևմտյան կոալիցիոն ուժերի կողմից վարվող հետևողական պայքարը, այդ կառույցների միջև առկա հակասություններն ու բախումները և այլն: Այնուամենայնիվ հիշյալ ազդեցիկ կառույցների շարքերում կենտրոնասիական տարածաշրջանը ներկայացնող իսլամականների, մասնավորապես ուզբեկների հայտնվելը վտանգավոր իրողությունների մասին է խոսում: Մասնավորապես՝ Սիրիայում և Իրաքում ստեղծված և ուզբեկներով համարված խմբերում ի հայտ են եկել նոր երիտասարդ, ռազմական փորձ ձեռք բերած առաջնորդներ: Վերջիններս կարող են վերադառնալ հայրենիք և այնտեղ սկսել ակտիվ պայքար իրենց գաղափարները չկիսողների դեմ: Նոր սերնդի ակտիվ իսլամականների ի հայտ գալն ու տարբեր տարածաշրջաններում ներգրավվածությունը լուրջ սպառնալիք կարող է դառնալ Ուզբեկստանի համար: Այս իրողությունները կարող են ուղղորդել ազդեցիկ իսլամական ծայրահեղական կառույցներին էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել Կենտրոնական Ասիային, մասնավորապես Ուզբեկստանին՝ այն դիտարկելով որպես հենց այդ կառույցների ակտիվության արեալ, ինչը նախկինում չկար:

Մերձավոր Արևելքում և Աֆղանստանում տիրող անկայուն իրավիճակը, այստեղ իսլամական ազդեցիկ հեղինակավոր կառույցների ակտիվությունը կարող է նպաստել Կենտրոնական Ասիայում, մասնավորապես Ուզբեկստանում բացահայտ և ընդհատակում գործող իսլամական ծայրահեղական կառույցների ակտիվությանը, որը անկայունության և բախումների նոր սպառնալիք կարող է բերել տարածաշրջանի համար: Բացի այդ, գնալով բարդանում է ավանդական իսլամական ուղղություններից տարբերվող գաղափարական մոտեցումներ ունեցող այլ ուժերին չեզոքացելու կամ ուղղորդելու հնարավորությունները ուզբեկստանյան իշխանությունների համար, որի պատճառներից մեկը այսօր գոյություն ունեցող պետություն-իսլամ իրավական կարգավորումներն են: Դա ուզբեկստանյան ներքին իրողությունների և արժեհամակարգային նոր ընկալումների պատճառ կարող է դառնալ, որը կխարսխալի աշխարհիկ մոտեցումներից դեպի կրոնական գաղափարներ անցման շեշտադրումների վրա:

Ամփոփում

Կենտրոնական Ասիան իսլամի ակտիվ տարածման տարածաշրջաններից մեկն է եղել: Այստեղ նկատվել է մուսուլմանական կրոնի ավանդական, ինչպես նաև ոչ ավանդական ուղղությունների տարածում: Ժամանակի ընթացքում Կենտրոնասիական տարածաշրջանում զարգացում ապրեց նաև իսլամական արմատականությունը, որը նոր դրսևորումներ և ակտիվ տարածում գտավ հատկապես հետխորհրդային ժամանակաշրջանում: Անկախացումից հետո Ուզբեկստանը դարձավ արմատականության տարածման արեալներից մեկը, որտեղ նկատվեցին ծայրահեղ արմատական դրսևորումներ՝ ահաբեկչությունների, իսլամական արմատական գաղափարներով տոգորված մուսուլմանների ակտիվության տեսքով:

1990-ական թթ. ուզբեկստանյան իշխանությունները կրոնական քաղաքականության համատեքստում հասարակության լայն շրջանակներին և հոգևորականությանը վերահսկելու նպատակով որդեգրեցին հանդուրժողական վարքագիծ իսլամի և այստեղ տարածված Հանաֆիական կրոնաիրավական ուղղության նկատմամբ: Այդ քաղաքականությամբ փորձ արվեց ստանալ հասարակական աջակցություն՝ իսլամի նկատմամբ բարիդրացիական վերաբերմունք ունեցող իշխանությունների հանդեպ՝ էլ ավելի վերահսկելի դարձնելով կրոնական գործընթացները երկրում:

Այնուամենայնիվ 21-րդ դարի առաջին և երկրորդ տասնամյակներում Ուզբեկստանում ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում և տարածաշրջանից դուրս ընթացող գործընթացները նպաստեցին իսլամի ծայրահեղ արմատական ուղղության ակտիվացմանը: Ուզբեկ իսլամականների ակտիվ ներգրավվածությունը, իմբավորումների և լիդերների առկայությունը Մերձավոր Արևելքում ընթացող ռազմական գործողություններին խոսում են երկրում ակտիվացող իսլամական ծայրահեղականության մասին:

Ուզբեկ իսլամականների ներքաշված լինելը իսլամական հեղինակավոր ծայրահեղական կառույցների շարքերում («Իսլամական պետություն», «այ-Կաիդա» և այլն) վկայում է, որ այդ կառույցները ուշադրության կենտրոնում են պահում Ուզբեկստանը և փորձելու են ավելացնել ազդեցությունը երկրում:

Մերօրյա իրականությունում ուզբեկ մուսուլմանների միջև առկա են տարածայնություններ, ինչ տեսանելի էր խորհրդային ժամանակներում և ս. դեռևս պահպանվում է ավանդական իսլամի և այլ իսլամական ուղղությունների միջև լարվածությունը, չնայած այն հանգամանքին, որ ուզբեկստանյան ներկայիս իշխանությունները փորձում են ուղղորդել կրոնը պետության նպատակներին ծառայեցնելու հուն:

Ինչպես իսլամի ծայրահեղ արմատական ուղղությունը կարգաճանա Ուզբեկստանում ցույց կտա ապագան: Շատ բան կախված կլինի 21-րդ դարի առաջին քառորդում նկատվող աշխարհաքաղաքական և աշխարհատեսական իրողություններից, Կենտրոնասիական տարածաշրջանում ընթացող զարգացումներից և Ուզբեկստանի ներքին՝ հասարակական-քաղաքական գործընթացներից և տնտեսական իրողություններից:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Baran Z.**, Radical Islamists in Central Asia. – Hudson Institute. www.hudson.org/content/research_attachments/attachment/1366/baran_vol2.pdf.
2. **Baran Z.**, The Challenge of Hizb-ut-Tahrir: Deciphering and Combating Radical Islamist Ideology. – The Nixon Center, September 2004. <http://www.nixoncenter.org>.
3. **Baran Z., Frederick Starr S., Cornell E.S.**, Islamic Radicalism in Central Asia and the Caucasus. // Implications for the EU, Silk Road Paper, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, July 2006, pp. 23-36.
4. **Brill Olcott M., Ziyaeva D.**, Islam in Uzbekistan: Religious Education and State Ideology. – Carnegie papers, 2008.
5. **Gunaratna R.**, Al-Qaeda. Viaje al interior del terrorismo islamista.-Barcelona, Servidoc, 2003.
6. **Hegghammer Th.**, Jihad in Saudi Arabia. Violence and Pan-Islamism since 1979. – Cambridge University Press: New York, 2010.
7. **Karin E.**, Central Asia: Facing Radical Islam.-Russia NIS Center, 2017.
8. **Lipovsky I.**, The Awakening of Central Asian Islam. // Middle Eastern Studies, 1996, vol. 32, no. 3, pp. 1-21.
9. **Olcott M.**, Sufism in Central Asia: A Force for Moderation or a Cause of Politicization? – Carnegie Endowment for International Peace, 2007, Washington D.C., <https://carnegieendowment.org/2007/06/06/sufism-in-central-asia-force-for-moderation-or-cause-of-politicization-pub-19197>.
10. **Rashid A.**, The Fires of Faith in Central Asia: Islamic Movement in Central Asia. // World Policy Journal, 2001, vol. 18, no. 1.
11. **Sageman M.**, Understanding Terror Networks. - Philadelphia, PA: University of Pennsylvania Press, 2004.
12. Uzbek fighters in Syria advertise “Islamic State”. – Radio Ozodi, 4 November, 2014.
13. **Zainabidinov S.**, Community of Akromiya, tendentious art of Uzbek special services and political scientists.,- April 5, 2005.

Տճանա/Հանձնվել է՝ 24.04.2021

Րեցենզիոն/Գրախոսվել է՝ 30.04.2021

Մոտ/Ընդունվել է՝ 05.05.2021